

գործք, ըստ սրբոյն Գիորնեսիոսի թէ՛ «պարտիմք
 նախ մաքրիլ՝ եւ մաքրել, լուսաւորիլ՝ եւ լուսաւո-
 րել, կատարելագործիլ՝ եւ կատարելագործել», 200
 որպէս աւանդեցաւ Առաքելոց սրբոց, զոր եւ ու-
 նիմք անշեղապէս, եւ անսպթաք ընթանամք ընդ
 շաւիղս նոցա. նախ՝ առնուլ զձեռնագրութիւն,
 եւ ապա տալ այլոց, յառաջ կատարելագործիլ,
 եւ ապա կատարելագործել. որպէս եւ է իսկ ճշմա-
 րիտ եւ հաստատուն: Եւ պսակն է խորհուրդ մեծ 205
 եւ պանծալի, ըստ Պօղոսի. «խորհուրդս այս մեծ
 է, բայց ես ասեմ ի քրիստոս եւ յեկեղեցի:» Եւ
 թէ՛ «պատուական է ամուսնութիւն եւ ուրիշ է
 անկողին», եւ թէ՛ «Աստուած զուգեաց՝ մարդ մի
 մեկնեցէ», 210
 քանզի սա՛ է պատուական զուգացումս
 ինչ, առանց որոյ շուն կոչին որք ընդ այլո՛ւմ զու-
 գին: Եւ օծումն վերջին է, որ զօրացուցանէ զմեզ
 մտանել՝ ի հանգէս ընդդէմ աշխարհակալին խա-
 ւարի, առ ի ըմբշմարտիլ ընդդէմ գոռողին. եւ
 առնուլ զպսակն յաղթանակի, աւանդեալ մեզ ի 215
 սրբոց Առաքելոց, ըստ աւետարանականն վար-
 դապետութեան թէ՛ «օծանէին զբազում հիւանդս».
 ուստի նոյն ի՛շ օրհնութեան կատարի յեկեղեցիս
 Հայաստանեայց, եւ օծանին ամենայն հիւանդա-
 ցեալք հոգւով եւ մարմնով. որով եւ ունիմք յոյս 220
 առողջութեան հոգւոյ եւ մարմնոյ, եւ փարատումն
 ամենայն ախտից: Են եւ այլ յոգունք աւանդու-
 թիւնք մասնաւորք, կարգեալք յեկեղեցի մեր.
 Եթէ ի տօնս տէրունականս, եւ սրբոցն Աստուծոյ,
 եւ թէ ի պահս եւ յաղօթս՝ եւ ի տքնութիւնս 225
 դիշերային հսկման. եւ թէ յարարողութիւնս
 ժամատեղեաց, եւ ի կարգաւորութիւնս, զորս
 թողաք, զի մի լիցի ձանձրութիւն ընթերցողաց,
 եւ մանաւանդ գրեալքս՝ ոչ ըստ բոլորին, եւ ոչ
 ըստ պատշաճին գրեցան, այլ ըստ մասին սա- 230
 կաւակի բանիւք, թողլով ապաստան ի ձեր գերա-
 կատար իմաստութիւնն չափել մասամբ զբոլորն.